ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՆՈՐ ԳԵՂԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր
Գեղի համայնք, +37494900906 norgeghi.kotayq@mta.gov.am

N 539

24 սեպտեմբերի 2021թ.

Տ-ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՓԲԸ
ՏՆՕՐԵՆ՝ Հ.ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ

ԿՄՆԳՀ-ԳՀԱՊՁԲ-20/07 ԾԱԾԿԱԳՐՈՎ

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԳԵՂԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԵՎՈՍՅԱՆ 82 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԹԻՎ 3 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՇԵՆՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Հարգելի պարոն Սուքիասյան

Նոր Գեղիի համայնքապետարանի և «Տ-ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՓԲԸ-ի միջև 2020 թվականի օգոստոսի 25-ին կնքվել է <<ԿՄՆԳՀ-ԳՀԱՊՁԲ-20/07>> ծածկագրով պայմանագիրը, որի 1.1 կետի համաձայն՝ <<Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ***ՀՀ Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնքի Թևոսյան 82 հասցեում գտնվող թիվ 3 մանկապարտեզի շենքի վերանորոգման*** աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար>>: Պայմանագրի կատարման վերջնաժամկետը սահմանվել է պայմանագրի հավելված 2-ով, որը երկարացվել է մինչև 2021 թվականի օգոստոսի 1-ը:

Հայտնում ենք,որ պայմանագրի կատարման ժամկետը ավարտվել է, սակայն «Տ-ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՓԲԸ-ի կողմից շինարարական աշխատանքները չեն ավարտվել, ինչպես նաև կատարման շրջանակներում տեխնիկական հսկողություն իրականացնող ԱՁ Մկրտիչ Սուրենի Մելքոնյանի կողմից ներկայացված գրությամբ տեղեկացրել է «Տ-ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՓԲԸ-ի կողմից թույլ տված կոպիտ խախտումների և թերությունների մասին:

Պայմանագրի ավարտի հաջորդ օրվա՝ օգոստոսի 1-ի դրությամբ շինարարական աշխատանքները մնացել են անավարտ և չեն շտկվել տեխնիկական հսկողություն իրականացնող ԱՁ Մկրտիչ Սուրենի Մելքոնյանի կողմից թվարկված թերություններն ու խախտումները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Տ-ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՓԲԸ-ն խախտել է պայմանագրի 1.1; 1.2 և 1.3 կետերով ստանձնած պարտավորությունները, Նոր Գեղիի համայնքապետարանը ղեկավարվելով <<ԿՄՆԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/07>> պայմանագրի 3.1.4 կետով միակողմանի հրաժարվում է Ընկերության հետ կնքած <<ՀՀ Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնքի Թևոսյան 82 հասցեում գտնվող թիվ 3 մանկապարտեզի շենքի վերանորոգման աշխատանքների կատարման>> գնման պայմանագրից՝ համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառվում է ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Տեղեկացնում ենք, որ «Տ-ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՓԲԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ՖՆ Գործառնական վարչության գանձապետական 900115104060 հաշվեհամարին փոխանցել 805 363 ՀՀ դրամը որպես տույժ և 55 796 ՀՀ դրամ տուգանք Պայմանագրի 6.2 և 6.3 կետերի համաձայն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ